

## **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**2023 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 7-ը շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի Լևոն Ազիզյանի Արաբական Միացյալ Էմիրություններ (ք. Դուբայ) գործուղման արդյունքների վերաբերյալ**

### **1. ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

Լևոն Ազիզյան, Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

### **2. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Արաբական Միացյալ Էմիրություններ (ք. Դուբայ), 2023 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 7-ը ներառյալ

### **3. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպություն /այսուհետ՝ ՀՕԿ/

### **4. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի Կողմերի 28-րդ համաժողովին (COP28):

### **5. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Ներկայացված է 6-րդ կետի ներքո:

### **6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

*Համաժողովի ընթացքում կայացել են մի շարք հանդիպումներ՝ տարբեր միջոցառումների մասնակցության շրջանակներում .*

### **Ա. թ. նյութերի 30**

- հանդիպում COP28-ի շրջանակներում ք. Դուբայում գտնվող ՀՀ պատվիրակության մյուս անդամների հետ, որի ընթացքում քննարկվել են Համաժողովի օրակարգը և պլանավորված միջոցառումները:
- Հանդիպում ՀՕԿ նախագահ պարոն Աբդուլլա Ալ Մանդուսի հետ:
- Մասնակցություն ՀՕԿ-ի «Գիտություն կլիմայական գործողությունների համար» տաղավարի բացմանը (IPCC-ի, MERI հիմնադրամի և ԱՄԷ-ի օդերևութաբանության ազգային կենտրոնի (NCM) հետ համատեղ):

### **Ա. թ. դեկտեմբերի 1**

- Մասնակցություն ԱՄԷ-ի օդերևութաբանության ազգային կենտրոնի (NCM) կողմից կազմակերպված միջոցառմանը, որը նվիրված էր «Վաղ նախազգուշացման համակարգը ԱՄԷ-ում» թեմային: Միջոցառմանը մասնակցում էին ՀՕԿ-ի, ինչպես նաև ազգային հիդրոօդերևութաբանական ծառայությունների ներկայացուցիչներ: Միջոցառման ընթացքում ներկայացվել է ԱՄԷ-ում վաղ նախազգուշացման համակարգի գործարկումը, որը հիմնված է չորս բաղադրիչների (4 հիմնասյուների) վրա՝
  - Աղետների ռիսկի իմացություն,
  - Վտանգների հայտնաբերում, դիտարկում, մոնիթորինգ, վերլուծություն և կանխատեսում,
  - Զգուշացումների տարածում և հաղորդակցություն,
  - Պատրաստվածություն և արձագանքման հնարավորություններ:
- Մասնակցություն ՀՕԿ կողմից կազմակերպված միջոցառմանը, որը նվիրված էր «Զրի կարևորագույն դերը կլիմայական գլոբալ նպատակներին հասնելու գործում» թեմային: Միջոցառման ընթացքում ներկայացվել է Փարիզի համաձայնագրի՝ ջրային ռեսուրսների կայուն կառավարման և ջրի ու կլիմայի հետ կապված հաջող լուծումների իրականացման փորձի փոխանակման թիրախային նպատակներից բխող վերջին գիտելիքների բազան:

- Մասնակցություն ՀՕԿ կողմից կազմակերպված «Վաղ նախազգուշացում արհեստական ինտելեկտի բոլոր նորամուծություններով՝ ազդեցությունների մասշտաբավորման նպատակով» խորագրով միջոցառմանը:
- Նախարար Հակոբ Սիմիդյանի գլխավորությամբ մասնակցություն Կանաչ կլիմայի հիմնադրամի Երկրների համագործակցության հարցերով տնօրեն Կարոլինա Ֆուենտեսի և փոխտնօրեն Նոնիլանհիլա Զինդելայի հետ կայացած հանդիպմանը: Հանդիպման ընթացքում քննարկել են հիմնադրամի աջակցությամբ ՀՀ-ում իրականացվող ծրագրերը և համագործակցության հետագա հնարավորությունները:
- Մասնակցություն «Հայաստանի ներդրումը գլոբալ ֆոնդային հաշվառման մեջ. Ազգային սահմանված ներդրումների /NDC / իրականացման ընթացքը» խորագրով միջոցառմանը: Միջոցառման ժամանակ ներկայացվեց Հայաստանի առաջընթացը NDC-ի իրականացման գործում, ինչպես նաև մասնակիցները կիսվեցին իրենց փորձով՝ զարգացող երկրներին աջակցման նպատակով:

## **Ս. թ. դեկտեմբերի 2**

- Մասնակցություն ՀՕԿ կողմից կազմակերպված միջոցառմանը, որը նվիրված էր «2023թ. առողջապահության ոլորտի համար կլիմայական ծառայությունների վիճակը. հիմնական արդյունքները և զարգացման ուղին» թեմային: Միջոցառման ընթացքում ներկայացվել են առողջապահության ոլորտին վերաբերող կլիմայական ծառայությունների վիճակի 2023 թվականի հիմնական արդյունքները և քննարկվել, թե ինչպես պետք է զարգացնել կլիմայական ծառայությունները՝ կլիմայի և առողջապահական ոլորտի մարտահրավերներին դիմակայելու համար: Քննարկվել են մի շարք գաղափարներ այն մասին, թե ինչպես հասնել ինստիտուցիոնալ զարգացման և բազմոլորտային ինտեգրման տրանսֆորմացիոն փոփոխությունների, որոնք անհրաժեշտ են կլիմայագիտության և ծառայությունների օգտագործման միջոցով կլիմայի փոփոխությունից, տատանողականությունից և եղանակային վտանգավոր երևույթներից առողջությունը պաշտպանելու համար: Միջոցառմանը մասնակցում էին ՀՕԿ-ի,

Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ինչպես նաև ազգային հիդրոոդերևութաբանական ծառայությունների ներկայացուցիչներ:

- Մասնակցություն ՀՕԿ կողմից կազմակերպված «Բացառիկ կլիմայական պայմաններ 2023 թվականի համար. այն ամենի մասին, ինչ անհրաժեշտ է իրազեկել բոլորին» խորագրով միջոցառմանը: Միջոցառման ընթացքում ներկայացվել է կլիմայի վիճակի մասին 2023թվականի նախնական զեկույցը, որտեղ ամփոփված են հիմնական կլիմայական ցուցանիշների և բարձր ազդեցություն ունեցող իրադարձությունների կարգավիճակի վերաբերյալ 2023 թվականի նախնական արդյունքները:

### **Ս. թ. դեկտեմբերի 3**

- Մասնակցություն ՀՕԿ կողմից կազմակերպված միջոցառմանը, որը նվիրված էր «Կլիմայագիտություն՝ հանուն կայուն ապագայի. Կիզալիի հոչակագիր» թեմային: Միջոցառման ընթացքում քննարկվել են զուգակցված Երկրային համակարգերի դիտարկման և կանխատեսման գործընթացում անհրաժեշտ բարելավումներն ու մարտահրավերները, ինչպես նաև հարակից այնպիսի հիմնական թեմաներ, ինչպիսիք են կլիմայի հետազոտության առաջընթացը, կլիմայի հետ մարդու փոխազդեցությունը և համատեղ արտադրվող կլիմայական ծառայությունների և լուծումների անհրաժեշտությունը:
- Մասնակցություն «Վաղ նախազգուշացում բոլորի համար» (EW4All) նախաձեռնության իրականացում» խորագրով միջոցառմանը, որի ժամանակ ներկայացվեցին երկրների մակարդակով «Վաղ նախազգուշացում բոլորի համար» նախաձեռնության իրականացման ընթացքում գրանցված առաջընթացները: Նախաձեռնությունը կյանքի կոչող առաջին թիրախային երկրները կիսվեցին իրենց փորձառության ընթացքում քաղված դասերով և տրամադրեցին համապատասխան տեղեկատվություն՝ սեփական ճանապարհային քարտեզը մշակող երկրներին: Վաղ նախազգուշացման շրջափուլը դեպի վաղ գործողությունների ամբողջական շղթա առաջ մղելու գործում կարևորվեց գործընկերության և նորարարության դերը՝ ընդգծելով այն

ուղին, որը թույլ կտա ավելի շատ գործընկերների միավորել ուժերը՝ համընդհանուր նպատակին հասնելու համար: Ելույթներով հանդես եկան ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեսը, ՀՕԿ-ի գլխավոր քարտուղար, պրոֆեսոր Պետերի Թաալասը, ՄԱԿ-ի Աղետների ռիսկի նվազեցման գրասենյակի (UNDRR) ղեկավար, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի Աղետների ռիսկի նվազեցման գծով հատուկ ներկայացուցիչ, EW4All նախաձեռնության համաղեկավար տիկին Մամի Միզուտորին, ինչպես նաև տարբեր երկրների բարձրաստիճան ղեկավարներ, նախարարությունների, Համաշխարհային բանկի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

#### **Ս. թ. դեկտեմբերի 4**

- Մասնակցություն «Պարտքի դիմաց կլիմայական գիտելիքների փոխանակում. Փարիզի համաձայնագրի իրականացման աջակցման գործիք» խորագրով միջոցառմանը: «Պարտքի դիմաց կլիմայական գիտելիքների փոխանակում» հայեցակարգը եզակի հնարավորություն է ի դեմս «ավանդական պարտքի դիմաց բնապահպանական գիտելիքների փոխանակումների», որոնք վերջերս հաջողությամբ իրականացվել են Էկվադորում, Բելիզում և Կաբո Վերդեում: Նշված հայեցակարգը նպաստում է ֆինանսների վերականգնմանը կլիմայի փոփոխության համատեքստում կայուն գործողությունների ձեռնարկման միջոցով, որը թույլ է տալիս խոցելի երկրներին վերականգնել իրենց տնտեսությունները՝ միաժամանակ պահպանելով իրենց պարտավորությունները կլիմայական փոփոխության դեմ պայքարի գործընթացում: Չնայած երկրորդ հայեցակարգը ավելի լայն տարածում ունի, սակայն պարտադիր չէ, որ այն կապված լինի պարտապան երկրների կլիմայական պարտավորությունների և ազգային մակարդակով սահմանված ներդրումների (NDCs) հետ: Սա հնարավորություն է տալիս զարգացող երկրներին ձեռք բերել հարկաբյուջետային տարածք՝ միաժամանակ լուծելով կլիմայի վերաբերյալ իրենց պարտավորությունների կատարման խնդիրը: Միևնույն ժամանակ «Պարտքի դիմաց կլիմայական գիտելիքների փոխանակում»-ը երկրների համար արդյունավետ գործիք է

Փարիզի համաձայնագրով ստանձնած պարտավորությունները կատարելու համար:

- Մասնակցություն ՀՕԿ կողմից կազմակերպված միջոցառմանը, որը նվիրված էր «Ջերմոցային գազերի գլոբալ մոնիթորինգ՝ թափանցիկության խթանման նպատակով» թեմային:
- Մասնակցություն ՀՕԿ կողմից կազմակերպված միջոցառմանը, որը նվիրված էր թվային հաղորդակցություն և տեխնոլոգիա. «Վաղ նախազգուշացում բոլորի համար» նախաձեռնությանը: Միջոցառմանը քննարկվել են պետական և մասնավոր հատվածի, մասնավորապես՝ բջջային և արբանյակային արդյունաբերության կողմից ստանձնած պարտավորություններն ու խոստումները՝ «Վաղ նախազգուշացում բոլորի համար» նախաձեռնության շրջանակներում ահազանգերի բազմալիքային տարածմանն աջակցելու համար: Ընդգծվել է տեխնոլոգիաների ներուժի կարևորությունը ռիսկի խմբում գտնվող մարդկանց ավելի արդյունավետ ընդգրկվածության համար և ներկայացվել պետություն-մասնավոր հատված համագործակցությունից բխող հնարավորությունները:
- Մասնակցություն «Նորարարական ֆինանսներ – եղանակի բարելավված կանխատեսումներ – Կլիմայի փոփոխության դեմ պայքարի արդյունավետ գործողությունների նախաձեռնում» խորագրով միջոցառմանը: Միջոցառումը կազմակերպվել էր «Սիստեմատիկ դիտարկումների ֆինանսավորման գործիք» (SOFF) հիմնադրամի կողմից՝ Միջնաժամկետ եղանակային կանխատեսումների Եվրոպական Կենտրոնի հետ համատեղ (ECMWF): Միջոցառումը նպատակաուղղված էր զարգացող երկրներում հիմնական դիտարկումների թերությունները շտկելու կարևորության վրա՝ ավելի որակյալ կանխատեսումների ապահովման նպատակով: Քննարկվել է, թե որքանով են ճշգրիտ եղանակային կանխատեսումները նպաստում կյանքի և ունեցվածքի պաշտպանությանը և ավելի արդյունավետ որոշումների կայացմանը, ներառյալ՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության բարձրացմանն ուղղված որոշումների կայացմանը:

## **Ա. թ. դեկտեմբերի 5**

- Մասնակցություն ՀՕԿ «Կլիմայական վիճակի մասին 2011-2022 թթ. տասնամյա զեկույց. անցյալի ուսումնասիրություն և կայուն զարգացման կանխատեսում» միջոցառմանը, որի ընթացքում ներկայացվեց «Կլիմայի վիճակի մասին» բազմամյա զեկույցը: Այս զեկույցը կարևոր ներդրում է կլիմայի երկարաժամկետ փոփոխությունները հասկանալու համար: Այստեղ ընդգծվեցին ջերմոցային գազերի աճման միտումները և հիմնական ցուցանիշների վրա դրանց ազդեցությունները՝ ներառյալ ջերմաստիճանը, ծովի մակարդակի բարձրացումը, սառցադաշտի զանգվածը և ծովի սառույցի տարածումը: Բացի այդ, քննարկվեցին բազմաթիվ այլ հասկացություններ, մասնավորապես անթրոպոգեն կլիմայական փոփոխությունները՝ դրանց ազդեցությունները կապելով ԿՁՆ-ին հասնելու զարգացման դինամիկայի հետ: Ակնկալվում է, որ զեկույցի մեկնարկն ավելի մեծ իրազեկում կապահովի մեղմման և հարմարվողականության միջոցառումներին և հիմնական պատկերացումներ կհաղորդի կլիմայի բարելավված ֆինանսավորման և ԿՁՆ-ների հետ սիներգետիկ գործողությունների կարևորության վերաբերյալ:

## **Ա. թ. դեկտեմբերի 6**

- Մասնակցություն «Հայաստանում կլիմայի ֆինանսավորման ներկա իրավիճակը և նորարարական գործիքները, ինչպիսիք են օրինակ՝ ներդրումային հիմնադրամները» քննարկմանը:
- Ճանաչողական այց ԱՄԷ Օդերնութաբանության ազգային կենտրոն (NMC), որտեղ քննարկվեցին երկկողմ համագործակցության հարցեր: ԱՄԷ Օդերնութաբանության ազգային կենտրոնը պատասխանատու է օդերնութաբանական դիտարկումների, եղանակի և կլիմայական կանխատեսումների, մթնոլորտային տեղումների քանակի ավելացման նպատակով մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության, օդի որակի մոնիթորինգի և սեյսմիկ վիճակի մոնիթորինգի համար:

Այցի ընթացքում ներկայացվեց Օդերևութաբանության ազգային կենտրոնի առաքելությունը (այն է՝ միավորել ԱՄԷ-ում օդերևութաբանական և սեյսմոլոգիական տեղեկատվության աղբյուրները, վերահսկել մթնոլորտում և երկրակեղևում տեղի ունեցող փոփոխությունները և մատուցել օդերևութաբանական ծառայություններ), հիմնական գործունեությունը, օդերևութաբանական, կլիմայական դիտարկումների, կանխատեսումների, տվյալների պահպանման, մշակման և տարածման, տեղեկատվության տրամադրման ձևերը, տեղումների արհեստական ավելացման աշխատանքները, ինչպես նաև վեբկայքը և բջջային հավելվածը: Ներկայացվեց նաև Կենտրոնի տեխնիկական հագեցվածությունը. Կենտրոնն ունի տվյալների կուտակման մշակման սեռվերային հզոր տնտեսություն և եղանակի կանխատեսման վերամասշտաբավորման համար սուպերհամակարգիչներ՝ մինչև 1կմ լուծաչափով եղանակային կանխատեսումներ թողարկելու համար, սեփական կինոթատրոն, ուսումնական կենտրոն՝ պետական իշխանության մարմինների, հասարակության տարբեր շերտերի օդերևութաբանական գիտելիքների հարստացման համար և այլն:

ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության 28-րդ համաժողովի (COP 28) ընթացքում տեղի են ունեցել նաև ***երկկողմանի հանդիպումներ՝***

- հանդիպում ՀՕԿ նախագահ Աբդուլլա Ալ Մանդուսի հետ,
- հանդիպում ՀՕԿ-ի գլխավոր քարտուղար, պրոֆ. Պետերի Թալլասի հետ: Քննարկվեցին ՀՕԿ-ի հնարավոր աջակցությամբ ՀՀ-ում Վաղ նախազգուշացման համակարգի ներդրման հարցերը, ս.թ.դեկտեմբերի 14-15-ը ժնկում կայանալիք հանդիպման օրակարգը, ինչպես նաև Ֆինլանդիայի օդերևութաբանական ծառայության հետ համագործակցության հեռանկարները:
- Հանդիպում ՀՕԿ մի շարք ներկայացուցիչների, մասնավորապես՝ SOFF-ի (Սիստեմատիկ դիտարկումների ֆինանսավորման գործիք) տնօրեն Մարկուս



Ռեպնիկի, ՀՕԿ ծառայությունների դեպարտամենտի տնօրեն Յոհան Ստենդերի, գիտական հարցերով պատասխանատու Ամիր Դելժուի հետ:

- Հանդիպում Եղանակի միջնաժամկետ կանխատեսումների Եվրոպական կենտրոնի (ECMWF) գլխավոր տնօրեն տիկին Ֆլորենս Ռաբիեռի հետ: Կազմակերպությանը անդամակցում է 23 երկիր, որպես համագործակցող՝ 12 երկիր, այդ թվում հարևան Վրաստանի Հանրապետությունը: Քննարկվեց կազմակերպությանը ՀՀ անդամակցության հարցը, ինչը խիստ կարևոր է տեղեկատվության ստացման և բարձր լուծաչափով եղանակի կանխատեսման թվային մոդելների կիրառման համար:
- Հանդիպում Գերմանիայի եղանակի ծառայության (DWD) Կլիմայի և շրջակա միջավայրի դեպարտամենտի տնօրեն Թոբիաս Ֆուչսի հետ: Հայաստանը հանդիսանում է ՀՕԿ-ի տարածաշրջանային կլիմայական կենտրոն: Յուրաքանչյուր ամիս կազմվում են Հայաստանի և Հարավային Կովկասի տարածաշրջանի կլիմայական մոնիթորինգի քարտեզները, որոնք տրամադրվում են՝ DWD-ի կայքում տեղադրելու համար [https://www.dwd.de/.../rcccm/nat/rcccm\\_nat\\_monthly.html](https://www.dwd.de/.../rcccm/nat/rcccm_nat_monthly.html): Քննարկվեց DWD-ի հետ համագործակցության ընդլայնման հնարավորությունը կլիմայական մոնիթորինգի և կլիմայական ծառայությունների ոլորտներում:
- Հանդիպում Մետեո-Ֆրանս ինտերնեյշնլ կազմակերպության նախագահ Պատրիկ Բենիչուի հետ:

## **7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

ՀՕԿ ներկայացուցիչների, ECMWF, DWD, NCM և Մետեո-Ֆրանս ինտերնեյշնլ կազմակերպության նախագահի հետ հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել զարգացնել համագործակցությունը, իրականացնել համատեղ գիտատեխնիկական ծրագրեր, մասնավորապես

պայմանավորվածություն է ձեռք բերվել DWD-ի կողմից կազմակերպվող դասընթացներին «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի մասնագետներին ընդգրկելու ուղղությամբ:

2024 թվականին նախատեսվում է համագործակցության հուշագրի ստորագրում ԱՄԷ Օդերևութաբանության ազգային կենտրոնի և «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի միջև:

## **8. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎ**

«Հիդրոդերևութաբանության և մոնիթորինգի

կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Լևոն Ագիգյան

12.12.2023թ.